



«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Գայանե Խաչատրյան
«Ունիսոն» ՀԿ իրավաբանական բաժնի ղեկավար
ՀՀ փաստաբանների պալատի անդամ

Հաշմանդամությանն առնչվող ՀՀ օրենսդրության վերլուծություն

Սույն հետազոտությունն իրականացվել է
Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստանի
աջակցությամբ



Հաշմանդամության անչվող ՀՀ օրենսդրության վերլուծություն

Ուսումնասիրված իրավական ակտերի ցանկ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
2. ՀՀ ընտանեկան օրենսգիրք
3. Զինապարտության մասին ՀՀ օրենք
4. ՀՀ աշխատանքային օրենսգիրք
5. «Ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին»
6. Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք
7. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ-ի թիվ 392 որոշում
8. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերը հաստատելու մասին»
9. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
10. Մարդուն օրգաններ եվ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին ՀՀ օրենք
11. ՀՀ կառավարության «Փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները եվ փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» 16 սեպտեմբերի 2010 թվականի N 1260-Ն որոշում,
12. ՀՀ կառավարության «Օրգանների եվ հյուսվածքների դոնորների ու ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» 11 նոյեմբերի 2010 թվականի N 1465-Ն որոշում,
13. ՀՀ կառավարության «Դիակից օրգաններ եվ (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության կարգը եվ պայմանները հաստատելու մասին» 11 նոյեմբերի 2010 թվականի N 1495-Ն որոշում,
14. ՀՀ կառավարության «Ազատազրկման վայրում գտնվող անձից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու պայմանները, ինչպես նաև օրգանը և (կամ) հյուսվածքը վերցնելուց հետո ազատազրկման վայրում գտնվող անձի բժշկական օգնության և խնամքի մատուցման պայմանները հաստատելու մասին» 15 նոյեմբերի 2012 թվականի N 1450-Ն որոշում,
15. ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 14 սեպտեմբերի 2010 թ. որոշում:

Ներածություն

ՀՀ-ում հաշմանդամության ոլորտում որդեգրած քաղաքականությունն ուղղված է հաշմանդամներին հասարակություն ինտեգրելուն, հիմնախնդիրները լուծելուն:

Հայաստանի Հանրապետությունը 30.03.2007 թվականին ստորագրել է ՄԱԿ-ի 13.12.2006 թվականին ընդունած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» հռչակագիրը և դրան կից արձանագրությունը, որը վավերացրել է 17.05.2010 թվականին և ուժի մեջ մտել 22.10.2010 թվականին: Կոնվենցիայի վավերացումը ենթադրում է, որ Հայաստանի Հանրապետությունը իր պատրաստակամությունն է հայտնում իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, որոնք կլուծեն հաշմանդամների հիմնախնդիրները և կնպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրվել հասարակություն:

Ներկայումս քայլեր են ձեռնարկվում օրենսդրությունը կոնվենցիային համապատասխանեցնելու համար, մշակվել է՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը: Միջոցառումներ Հայաստանի Հանրապետության մի շարք նորմատիվ իրավական ակտերում դեռևս կան թերություններ և բացեր, որոնք կիրառման ընթացքում խնդիրներ են առաջացնում, որը պայմանավորված է կամ կիրառման կարգի բացակայությամբ, կամ էլ անորոշությամբ: Վերը նշվածը պնդելու հիմք է հանդիսանում հաշմանդամության ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրության վերլուծությունը և կազմակերպությանը դիմած շահառուների կոնկրետ դեպքերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք և ՀՀ ընտանեկան օրենսգիրք

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի 70-րդ գլխով կարգավորվում են ժառանգության իրավունքին վերաբերաբերող իրավահարաբերությունները, որի 1194 հոդվածով սահմանված են ժառանգության պարտադիր բաժնի իրավունք հասկացությունը և այդ իրավունքը ունեցող անձանց ցանկը, որոնց թվում են նաև հաշմանդամները և 60 տարեկան անձինք՝

«1. Պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

2. Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

3. Պարտադիր բաժնի չափը որոշելիս հաշվի է առնվում այն ամենը, ինչ նման բաժնի իրավունք ունեցող ժառանգը որևէ հիմքով ստանում է ժառանգությունից՝ ներառյալ նման ժառանգի օգտին սահմանված կտակային հանձնարարության արժեքը»:

Նույն օրենսգրքի 1220 հոդվածով սահմանված է ժառանգատուի խնամքի ներքո գտնվող անաշխատունակ անձանց ըստ օրենքի ժառանգների հետ միասին ժառանգելու իրավունքը՝

«Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո: Ըստ օրենքի այլ ժառանգների առկայության դեպքում նրանք ժառանգում են այն հերթի ժառանգների հետ միասին, որը ժառանգության է հրավիրվում»:

«Անաշխատունակ անձ» հասկացությունը հանդիպում է նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի մի շարք հոդվածներում, մասնավորապես 77 հոդվածը սահմանում է, որ՝

«Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց:

Այդպիսի օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դրա համար անհրաժեշտ միջոցներ ունեցող մյուս ամուսնուց դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝

ա) անաշխատունակ անապահով ամուսինը.

բ) կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

գ) անապահով ամուսինը, որ խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ չափահաս զավակին»:

իսկ 78 հոդվածի համաձայն՝

«1. Նախկին ամուսնուց, որը նյութական բավարար միջոցներ ունի, դատական կարգով ալիմենտի պահանջի իրավունք ունի՝

ա) նախկին կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

բ) անապահով նախկին ամուսինը, որը խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ զավակին.

գ) անաշխատունակ անապահով նախկին ամուսինը, որը հաշմանդամ է դարձել մինչև ամուսնալուծվելը կամ ամուսնալուծվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում.

դ) անապահով ամուսինը, որը կենսաթոշակային տարիքի է հասել ամուսնալուծության պահից սկսած հինգ տարում, եթե ամուսինները տասնհինգ և ավելի տարի գտնվել են ամուսնության մեջ:

2. Ալիմենտի չափը և ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուն դա տրամադրելու կարգը կարող է որոշվել նախկին ամուսինների համաձայնությամբ»:

Սակայն, թե քաղաքացիական, թե ընտանեկան օրենսգրքերով, ինչպես նաև այլ իրավական ակտերով հստակ սահմանված չէ «անաշխատունակ անձ» հասկացության նշանակությունը, որը իրավահարաբերությունների ընթացքում առաջացնում են անորոշություն, իսկ որոշ դեպքերում նաև կամայական մոտեցման առիթ են հանդիսանում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված 1194 հոդվածից ելնելով կարելի է ենթադրել, որ 1220 հոդվածում նշված անաշխատունակ անձինք հաշմանդամներն ու 60 տարեկանը լրացած անձիք են, մինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված է, որ՝ **«Իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի»**, ինչպես նաև **«Իրավական ակտի դրույթները պետք է ընկալվեն միանշանակ, ապահովեն հուզական չեզոքություն»**:

«Անաշխատունակ» հասկացությունը նաև հանդիպում է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածում, որը սահմանում է զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը, համաձայն որի՝

1. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն գորակոչիկին, որն ունի՝

ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:

Անաշխատունակ ծնողներ են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը,*
- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը,*
- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը.*

Այս հոդվածով տրված է սահմանումը, բայց այս դեպքում 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներն ու ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիք ունեցող անձինք են համարվում անաշխատունակ, սակայն իրավաբանական գրականության համաձայն՝ անաշխատունակ անձ համարվում են հաշմանդամները և 60 տարեկանից բարձր անձինք, սակայն այս հասկացության սահմանման բացակայության պատճառով, վերը նշված հոդվածների կիրառման ընթացքում պատկան մարմինները հայեցողական մոտեցում են ցուցաբերում և անաշխատունակ անձին բնորոշում են ԲՄՓՀ-ի կողմից տրված աշխատունակության աստիճանից ելնելով, որը տվյալ դեպքում սխալ է: Նման խնդրի էր հանդիպել «Ունիսոն» ՀԿ-ի շահառուներից մեկն ով զրկվել էր ժառանգությունից, թեև գտնվել էր ժառանգատուի խնամքի տակ և անգամ դատական կարգով չէր վերականգնվել նրա խախտված իրավունքը և զրկվել էր բնակարանից:

ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Աշխատանքային օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու

պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները: ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված են մի շարք դրույթներ, որոնցով կարգավորվում են հաշմանդամների աշխատանքային հարաբերությունները, սահմանված են արտոնություններ, ինչպես նաև երաշխիքներ աշխատատեղը և պաշտոնը պահպանելու հարցում մինչև մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային խեղման պատճառով աշխատունակությունը կորցրած աշխատողի աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը:

Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից են՝

1) աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը (որը յուրաքանչյուրն ազատորեն ընտրում է կամ որին ազատորեն համաձայնում է), աշխատանքային ունակությունները տնօրինելու, մասնագիտության և գործունեության տեսակի ընտրության իրավունքը.

3) աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

Օրենքի առջև բոլոր մարդկանց իրավահավասարությունն ու խտրականության արգելումը սահմանված է ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով՝

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածով խտրականության արգելման համգամանքների շարքում ընդգրկված չէ հաշմանդամությունը, որը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

«Ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին ֆինանսական աջակցություն տրամադրելու» կարգ

ՀՀ Կառավարության կողմից ընդունված «Ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին ֆինանսական աջակցություն տրամադրելու» կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձբաղվածության պետական ծառայություն» գործակալության զբաղվածության մարզային և տարածքային կենտրոնների կողմից գործազուրկներին և հաշմանդամներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները և նպատակ ունի խրախուսելու անձին սեփական գործ սկսելու և նոր աշխատատեղ ստեղծելու հարցում:

Մատնանշված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անձին անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն գրանցելու համար տրվում են ֆինանսական միջոցներ՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի վճարման նպատակով անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, իսկ առևտրային կազմակերպություն գրանցվելու համար՝ բազային տուրքի 12-ապատիկի չափով.

բ) ֆիրմային անվանումը գրանցելու նպատակով պետական տուրքի վճարման համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով.

գ) կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն գնի չափով:

Սույն կարգի երկրորդ գլխով սահմանված է այն փաստաթղթերի ցանկը, որը անհրաժեշտ է ներկայացնել ֆինանսական աջակցություն ստանալու համար՝

Անձը ֆինանսական աջակցության ծրագրում ընդգրկվելու համար տարածքային կենտրոն է ներկայացնում գործարար ծրագիր՝ 2 օրինակից: Գործարար ծրագիրը պետք է ներառի՝

ա) ընդհանուր բաժին (այս բաժնում նշվում են գործարար ծրագրի նպատակը, խնդիրները և նոր ստեղծվող տնտեսավարող սուբյեկտի գործունեության կազմակերպական-իրավական ձևը).

բ) գործունեության տեսակը (այս բաժնում նշվում են արտադրվող ապրանքների անվանացանկը և (կամ) կատարվող աշխատանքների տեսակները և (կամ) մատուցվող ծառայությունների անվանումները).

գ) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացման շուկան (այս բաժնում նշվում են ապրանքների իրացման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման տեղը, ծավալը).

դ) տեղեկություններ մրցակիցների մասին (այս բաժնում նշվում է մրցակիցների մասին ընդհանուր տեղեկատվություն).

ե) ռիսկերի կանխատեսումը (այս բաժնում նշվում են հնարավոր ռիսկերը և դրանց կանխարգելումը).

զ) գործարար ծրագրի ֆինանսական նկարագիրը (այս բաժնում նշվում են գործարար ծրագրի իրականացման համարանհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհատ ձեռնարկատիրոջ կամ առևտրային կազմակերպության պետական գրանցման համար տրամադրվող գումարի չափը և սեփական ներդրումների չափը՝ կցելով այն հիմնավորող փաստաթղթերը):

Վերլուծելով սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը մասնավորապես գործարար ծրագիր ներկայացնելու անհրաժեշտությունը և ծրագրին ներկայացվող պահանջներին, միանշանակ հիմնավորվում է, որ ըստ էության այն որոշակի խնդիրներ է ստեղծում հաշմանդամի համար, քանի որ գործարար ծրագիր ներկայացնելու համար անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ, որը ենթադրվում է, որ ոչ բոլորը կարող են ունենալ:

Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք

Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 10 հոդվածով սահմանված է ՀՀ կառավարության իրավասությունը, համաձայն որի՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաղաքաշինության բնագավառում՝

ա) ապահովում է պետական քաղաքականության իրականացումը.

բ) սահմանում է քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգերը.

գ) հաստատում է բնագավառի քաղաքաշինական և տարածքային զարգացման հանրապետական և մարզային պետական ծրագրերը.

դ) հաստատում է օրենքի 17-րդ հոդվածի չորրորդ մասի «ա» և «բ» կետերով սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ քաղաքաշինական փաստաթղթերը.

ե) մշակում է քաղաքաշինական գործունեության տնտեսական խրախուսման քաղաքականությունը և իրականացնում է իր լիազորությունների շրջանակներում.

զ) ապահովում է հաշմանդամների համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային

ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացումը.

է) իրականացում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Նույն օրենքի 16 հոդվածի համաձայն՝

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգը քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց է, որը սահմանում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, հաշմանդամների տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման, իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ՝ օբյեկտին, առանձին շենքին, շինությանը, կոնստրուկցիային կամ շինարարական նյութերին ներկայացվող պահանջներով:

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը կազմում են քաղաքաշինական բնագավառի իրավական ակտերի համակարգի բաղկացուցիչ մասը և հիմք են ծառայում փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար:

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար:

Վերը նշված հոդվածների հիման վրա՝ 2006 թ. թիվ 392 որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը», ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով հաստատվել են «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերը»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 11-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է **«քաղաքաշինության և բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառում վարչական իրավախախտումներին»**, այն բաղկացած է 24 հոդվածներից, սակայն որևէ հոդվածով նախատեսված չէ սանկցիա ՀՀ կառավարության վերը նշված որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը չկատարելու համար, մինչդեռ այդ իրավական ակտերով սահմանված նորմերը ունեն իմպերատիվ բնույթ: Սանկցիաների բացակայության հետևանքով էլ շուրջ 7 տարի է պատշաճ վերահսկողություն չի իրականացվում և դեռևս շահագործման են հանձնվում հաշմանդամներին չհարմարեցված նոր կառուցվող շենք շինություններ, իսկ արդեն գոյություն ունեցողները չեն հարմարեցվում կամ հարմարեցվում են նորմերին ոչ համապատասխան, որոնք օգտագործման համար պիտանի չեն, դրա վառ օրինակներն բնակելի շենքերի և հասարակական նշանակության այլ շինությունների մոտ կառուցված թեքահարթակները:

Մարդուն օրգաններ եվ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին ՀՀ օրենք

Մարդուն օրգաններ եվ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին ՀՀ օրենքով սահմանված են մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու իրավական հիմքերը, դոնորի, ռեցիպիենտի և բժշկական հաստատությունների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգավորում է փոխպատվաստման հետ կապված հարաբերությունները:

Փոխպատվաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև ներպետական մի շարք իրավական ակտերով, դրանք են՝

- ՀՀ կառավարության «Փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները եվ փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» 16 սեպտեմբերի 2010 թվականի N 1260-Ն որոշմամբ,

- ՀՀ կառավարության «Օրգանների եվ հյուսվածքների դոնորների ու ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» 11 նոյեմբերի 2010 թվականի N 1465-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Դիակից օրգաններ եվ (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության կարգը եվ պայմանները հաստատելու մասին» 11 նոյեմբերի 2010 թվականի N 1495-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Ազատագրկման վայրում գտնվող անձից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու պայմանները, ինչպես նաև օրգանը և (կամ) հյուսվածքը վերցնելուց հետո ազատագրկման վայրում գտնվող անձի բժշկական օգնության և խնամքի մատուցման պայմանները հաստատելու մասին» 15 նոյեմբերի 2012 թվականի N 1450-Ն որոշմամբ,
- ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 14 սեպտեմբերի 2010 թ. որոշմամբ:

Փոխպատվաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև մի շարք միջազգային իրավական ակտերով, որոնց մի մասը ՀՀ վավերացրել է մի մասը՝ ոչ:

Փոխպատվաստման հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ դրույթները տեղ են գտել հետևյալ միջազգային իրավական ակտերում՝

- Համաշխարհային բժշկական ասոցիացիայի կողմից ընդունված՝ Տոկիոյի 1975 թ-ի հռչակագրում,
- 1983թ-ի Բժշկական էթիկայի միջազգային օրենսգրքում,
- Կենդանի օրգանների առուվաճառքի վերաբերյալ 1985 թ-ի հայտարարությունում,
- Երեխաների առողջության պահպանման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ 1987թ-ի հայտարարությունում,
- Մարդու օրգանների փոխպատվաստման վերաբերյալ 1987 թ-ի հռչակագրում,
- 1989 թ-ի Հելսինկյան հռչակագրում,
- Արհեստական բեղմնավորման և էմբրիոնների փոխպատվաստման վերաբերյալ 1987 թ-ի հայտարարությունում,
- «Մարդու գենոմ»նախագծի վերաբերյալ 1992թ-ի հռչակագրում,
- Կոպենհագենի 1994թ-ի հռչակագրում,
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված՝ Եվրոպայում հիվանդի իրավունքների ապահովման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ 1994 թ-ի հռչակագրում,
- Էվթանազիայի վերաբերյալ 1987 թ-ի հռչակագրում,
- Օրգանների թրաֆիկինգի և փոխպատվաստման նպատակով կատարվող զբոսաշրջության վերաբերյալ 2008 թ-ի ստամբուլյան հռչակագրում և այլ իրավական ակտերում: Վերոնշյալ իրավական ակտերից Հայաստանի կողմից վավերացվել է միայն «Մարդկանց, մարդկյին օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարի անկախ պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը, որը Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2006 թ-ի սեպտեմբերի 4-ին:

Թե ներպետական, թե միջազգային իրավական ակտերի ընդհանուր սկզբունքներից է՝ դոնորի և ռեցիպիենտի, իսկ այն դեպքում երբ դա հնարավոր չէ, նրանց ընտանիքի անդամների կամ ներկայացուցիչների տեղեկացված, կամավոր և գիտակցված համաձայնության ստուգումը, ինչպես նաև խիստ քննադատվում է մարդու օրգանների առուվաճառքը: Իրականացվող միջոցառումները հիմնականում ուղղված են բացառելու համար մարդկանց թրաֆիկինգը, այն արգելելու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև ՀՀ քրեական օրենսգրքի 125 հոդվածով: Մինչդեռ վերլուծելով օրենքը և դրա հետ առնչվող օրենսդրական ակտերը կարելի է եզրակացնել, որ ըստ էության ընդգրկվել են ոլորտը կարգավորող բոլոր հարցերը, կարգը, սակայն կան կիրառման հետ անորոշություններ ու բացեր կապված դոնորի հայտնաբերման հետ:

Համաձայն Մարդուն օրգաններ եվ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին ՀՀ օրենքի այդ նպատակով ստեղծվել է օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստր, որտեղ գրանցվում են հետևյալ տեղեկությունները.

ա) օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման դեպքերը.

բ) օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների վերաբերյալ տեղեկատվությունը.

գ) տեղեկատվություն այն անձանց վերաբերյալ, որոնք կենդանության օրոք հրաժարվել են հանդես գալ որպես դոնոր:

Սակայն թերի է Օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման և օգտագործման Հայաստանի Հանրապետության կառավարության կարգը այն առումով, որ անհրաժեշտ է աշխատանք տանել և սահմանել կարգ, որով բոլոր կազմակերպությունները, մասնավորապես՝ վերակենդանացման բաժանմունքներ ունեցող հիվանդանոցներում, դիախերձարաններում, ստեղծվի համակարգ, որ եթե մարդու մոտ արձանագրվել է ուղեղային մահ, կամ դժբախտ պատահարների հետևանքով մահացած անձանց դիախերձման ներկայացնելուց, այդ կազմակերպությունները իրավունք ունենան դիմել հարազատին՝ մահացողի օրգանները վերցնելու համար:

Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր անձինք են տեղյակ, այն մասին որ կենդանության օրոք կարող են համաձայնվել կամ հրաժարվել դոնոր լինելուց, կամ որ մահացողի օրգանի պահանջարկ կա այլ անձանց կյանքը փրկելու համար: Ինչպես ցույց է տալիս փորձը դոնոր հանդես են գալիս հիվանդի հարազատները և հիվանդը ինքը պետք է գտնի դոնոր իր համար, սակայն քանի որ վերակենդանացման բաժանմունքներում և դժբախտ դեպքերից մահացած անձանց վերաբերյալ տեղեկությունները հասու չեն հիվանդին կամ նրա հարազատներին, ապա այդ գործընթացը զգալիորեն դժվարանում է և բազմաթիվ հիվանդներ որոնց կյանքը հնարավոր է փրկել, այդպես էլ չեն բուժվում դոնոր չլինելու պատճառով: